ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1231-Ա

14 օգոստոսի 2026 թ. | ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 21.07.2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1076-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 30.07.2026թ. թիվ Կ-30072026-04-0113 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի ղեկավարի 21.07.2026 թվականի «Ինքնակամ կառուցված բնակելի տունը օրինականացնելու մասին» թիվ 1076-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ հանել «3. 23.8քմ մակերեսով շինությունը համարել ինքնակամ» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1232-Ա

14 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 3-րդ գլխի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 30.10.2025թ. թիվ 27-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով 14.08.2026թ.-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի մրցութային հանձնաժողովի ձևավորման նպատակով հատուկ ծրագրով ընտրված հանձնաժողովի անդամների ցանկը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն սույն որոշման թիվ 1, թիվ 2, թիվ 3, թիվ 4 և թիվ 5 հավելվածների:

2. Սահմանել, որ համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթը անցկացվում է ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից հաստատված կարգի համաձայն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ստորագրող
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

2026-08-14 17:09:48 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1233Ա

14 օգոստոսի 2026 թ. | ք. Էջմիածին

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, հաշվի առնելով կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Լիլիթ Հակոբյանի զեկուցագիրը, երիտասարդների միջազգային օրվա կապակցությամբ կազմակերպվող համաքաղաքային միջոցառումների համար անհրաժեշտ ապրանքների վարձակալության նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2026թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 163000/ մեկ հարյուր վաթսուներեք հազար/ դրամ փոխանցել Սերվիս Գրուպ ՍՊԸ-ի Ակբա բանկ ՓԲԸ-ի 220493332922000 հաշվեհամարին՝ նրա հետ կնքված պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1234Ա

14 օգոստոսի 2026 թ. | ք. Էջմիածին

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, հաշվի առնելով կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Լիլիթ Հակոբյանի զեկուցագիրը, երիտասարդների միջազգային օրվա կապակցությամբ կազմակերպվող համաքաղաքային միջոցառումների համար շտապ բժշկական օգնության ծառայություն ձեռք բերելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2026թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 40000/ քառասուն հազար/ ՀՀ դրամ փոխանցել ՀՀԱՆ «Հանրապետական Շտապ Օգնության Ծառայություն» ՓԲԸ-ի 1570070037320300 հաշվեհամարին՝ նրա հետ կնքված պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1235Ա

14 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, հաշվի առնելով կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Լիլիթ Հակոբյանի զեկուցագիրը, երիտասարդների միջազգային օրվա կապակցությամբ ֆոտոնկարահանման ծառայություն ձեռք բերելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2026թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 75000/ յոթանասունհինգ հազար/ ՀՀ դրամ փոխանցել «Սերէ» ՍՊԸ-ի Ամերիաբանկ ՓԲԸ-ի 1570060667486600 հաշվեհամարին՝ նրա հետ կնքված պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1236Ա

14 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, հաշվի առնելով կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Լիլիթ Հակոբյանի զեկուցագիրը, երիտասարդների միջազգային օրվա կապակցությամբ հյուրասիրության ծառայություն ձեռք բերելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2026թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 42800/ քառասուներկու հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ փոխանցել ԱՁ Նաիրա Սահակյանի Հայէկոնոմբանկ ԲԲԸ-ի 163118011911 հաշվեհամարին՝ նրա հետ կնքված պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1237-Ա

17 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ 04-002-0231-0013 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով ՌԴ քաղաքացի Աստղիկ Լևոնի Այվազյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի 04-002-0231-0013 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 05052026-04-0056 տրված՝ 24.10.2023թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011JMSBMLU/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Արագածի զանգված 1-ին փողոց, թիվ 3 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ 04483138

Ստորագրված է
17 օգոստոսի 2026 թվականին
ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1238-Ա

17 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՀԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Արայիկ Հենրիխի Պետրոսյանի լիազորված անձ անձ /հիմք՝ «Երևան» նոտարական տարածքի նոտար Տաթևիկ Մինասի Մինասյանի կողմից 08.07.2026թ. հաստատված 14457 գրանցամատյանով գրանցված լիազորագիրը/ Ռոբերտ Էդիկի Ղահրամանյանի դիմումը Արայիկ Հենրիխի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 24072026-04-0074 տրված 24.07.2026թ., «ՅԱՐԴ» ՍՊԸ-ի /որակավորման վկայական թիվ 0502/ կողմից 27.07.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04022EKHME6D , 04022AFFTPJX , 04022PXMVJAX , 04022NMDWCLF , 04022H4P5AME, 040226FQTWRQ , 04022A4RUXRT, 04022CLYJTF2, 04022HRMLQUX/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի 5-րդ փողոցի թիվ 2 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ոսկեհատ բնակավայր, 5-րդ փողոց, թիվ 2/8 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ոսկեհատ բնակավայր, 5-րդ փողոց, թիվ 2/7 հողամաս,

Առանձնացվող հատված 3-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ոսկեհատ բնակավայր, 5-րդ փողոց, թիվ 2/6 հողամաս,

Առանձնացվող հատված 4-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ոսկեհատ բնակավայր, 5-րդ փողոց, թիվ 2/5 հողամաս,

Առանձնացվող հատված 5-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ոսկեհատ բնակավայր, 5-րդ փողոց, թիվ 2/4 հողամաս,

Առանձնացվող հատված 6-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ոսկեհատ բնակավայր, 5-րդ փողոց, թիվ 2/3 հողամաս,

Առանձնացվող հատված 7-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ոսկեհատ բնակավայր, 5-րդ փողոց, թիվ 2/2 հողամաս,

Առանձնացվող հատված 8-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ոսկեհատ բնակավայր, 5-րդ փողոց, թիվ 2/1 հողամաս,

Առանձնացվող հատված 9-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ոսկեհատ բնակավայր, 5-րդ փողոց, թիվ 2 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ 04463138

Ստորագրված է
17 օգոստոսի 2026 թվականին
ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1239-Ա

17 օգոստոսի 2026 թ. | ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՐԱԳԱԾԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 26/1 ՀԱՍՑԵՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 040929QEKQGC.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Լեռնամերձ բնակավայրի սեփականություն հանդիսացող Վաղարշապատ համայնք, Լեռնամերձ բնակավայր, Արագածի փողոց թիվ 26/1 հասցեում գտնվող 0.0314հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Լեռնամերձ բնակավայր, Արագածի փողոց թիվ 34/1 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Ստորագրված է
17 օգոստոսի 2026 թվականին
ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1240-Ա

17 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՐԳԱՍՏԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 20-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Չարենց փողոցի թիվ 134 տան բնակիչ Խաթուն Մովսեսի Անտապյանի դիմումը իրեն և Հովհաննես Ժորայի Անտապյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 26032026-04-0103 տրված՝ 29.11.2007թ., «Արսեն Մելքոնյան Արթուրի» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0489/ կողմից 25.06.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 0416256BSD4F, 04162AVGGWPP/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Մրգաստան բնակավայրի 20-րդ փողոցի թիվ 9 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Մրգաստան բնակավայր, 20-րդ փողոց, թիվ 9/1 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Մրգաստան բնակավայր, 20-րդ փողոց թիվ 9 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

Ստորագրված է
17 օգոստոսի 2026 թվականին
ք. Էջմիածին